ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/12

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Էկոմիքս» ՍՊԸ-ի 16.06.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/12 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1.«Էկոմիքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Էկոմիքս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 16.06.2017թ. բողոքով հայտնել է, որ 2017 թվականի մարտի 21-ին մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ծածկագրով ընթացակարգին, այնուհետև մարտի 17-ին էլեկտրոնային փոստով ստացել է ծանուցում, համաձայն որի առաջարկվել է Ընկերությանը 3 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցման մեջ նշված էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Այնուհետև, մայիսի 30-ին էլեկտրոնային փոստով Ընկերությունը ստացել է ծանուցում, որտեղ նշվել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ հայտը ներկայացնելու

տարվա և դրան նախորդող տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերին վերաբերող հաշիվ-ապրանքագրերի արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում:

Հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 7.3 կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին հայտնել է, որ վերը նշված անհամապատասխանությունը Ընկերության կողմից չի շտկվել, քանի որ ըստ էության որևէ անհամապատասխանություն գոյություն չի ունեցել՝ հանձնաժողովի կողմից հաշվի չի առնվել, որ որպես համարժեք ներկայացված պայմանագրով նախատեսված չի եղել դրա կատարում ողջ ծավալով, իսկ կատարման ծավալը հաստատող փաստաթղթերը Ընկերության կողմից ներկայացվել են: Ինչ վերաբերվում է պայմանագրի կատարման արձանագրությանը, ապա դրանում նշված է պայմանագրի արժեքը, այլ ոչ թե կատարված մասի արժեքը, ինչը չի կարող համարվել անհամապատասխանություն:

Հունիսի 12-ին էլեկտրոնային փոստով Ընկերությունը ստացել է պայմանագիր կնքելու որոշման մասին արձանագրությունը, համաձայն որի Ընկերության հայտը համարվել է անհամապատասխան, քանի որ ներկայացրած որակավորման չափանիշը հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճեններում նշված գումարների հանրագումարը և այդ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստման մեջ նշված գումարները, միմյանց չեն համապատասխանում:

Ընկերությունը նշել է, որ «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի (մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը) պահանջներին համապատասխան:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ կետով, Կարգի 65-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջները՝ այն է.

Մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ ավիասպասարկման ծառայությունները կամ, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 16.06.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ «Էկոմիքս» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է, քանի որ Ընկերության կողմից ներկայացրած որակավորման չափանիշը հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և հաշիվ-ապրանքագրերի պատճեններում նշված գումարների հանրագումարը և այդ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման մեջ նշված գումարները միմյանց չեն համապատասխանում:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլ. նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 2-րդ կետի 2.3-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Էկոմիքս» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

4. «Էկոմիքս» ՍՊԸ-ն հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան***

նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի հետ կնքած «ԵՔԼ-ԲԸԱՊՁԲ-14/1» և «ԵՔԼ-ՇՀԱՊՁԲ-15/4(1)» պայմանագրերը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 16 507 121 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. «Էկոմիքս» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ (1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 33-րդ, 37-րդ և 80-րդ չափաբաժինների մասով), մասնավորապես՝ 33-րդ չափաբաժնի մասով ***ընդհանուր արժեքը կազմել է 525 000 ՀՀ դրամ, 37-րդ չափաբաժնի մասով՝ 256 000 և 80-րդ չափաբաժնի մասով՝ 1 190 000 ՀՀ դրամ:***

6. Պատվիրատուն 17.05.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից (ըստ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների ամփոփաթերթի՝ Ընկերությունը 1-ին տեղ է զբաղեցրել Ընթացակարգի 33-րդ, 37-րդ և 80-րդ չափաբաժինների մասով), ուստի անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում g.tovmasyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

7. «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել են հետևյալը՝

- «Էկոմիքս» ՍՊԸ-ի և «Երքաղլույս» ՓԲԸ-ի միջև 14.01.2014թ. կնքված թիվ ԵՔԼ-ԲԸ-ԱՊՁԲ-14/1 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 5 859 180 (հինգ միլիոն ութ հարյուր հիսունինը հազար հարյուր ութսուն) ՀՀ դրամ:***
- «Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Էկոմիքս» ՍՊԸ-ի միջև 14.01.2014թ. կնքված պայմանագրի կատարման 02.02.2015թ. արձանագրության համաձայն՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները համապատասխանել են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և վաճառողի կողմից մատակարարվել են հայտերի հիման վրա, ժամանակին և պատշաճ կերպով:

○ «Էկոմիքս» ՍՊԸ-ի և «Երքաղլույս» ՓԲԸ-ի միջև 27.02.2015թ. կնքված թիվ ԵՔԼ-ՇՀԱՊՁԲ-15/4(1) պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 10 647 941 (տաս միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ:***

○ «Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Էկոմիքս» ՍՊԸ-ի միջև 27.02.2015թ. կնքված պայմանագրի կատարման 01.02.2016թ. արձանագրության համաձայն՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները համապատասխանել են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և վաճառողի կողմից մատակարարվել են հայտերի հիման վրա, ժամանակին և պատշաճ կերպով:

8. Պատվիրատուն 30.05.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերին վերաբերող հաշիվ-ապրանքագրերի, ընդունման-հանձնման արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, ուստի հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 7.3 կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները և ուղարկել g.tovmasyan@mil.am էլեկտրոնային փոստին: Հրավերի 7.4 կետի համաձայն՝ մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար

2) չշտկելու դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.05.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մերժել է «Էկոմիքս» ՍՊԸ-ի հայտը, այն պատճառաբանությամբ, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշը հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի), դրա հաշիվ-ապրանքագրերի պատճեններում նշված գումարների հանրագումարը և այդ

պայմանագրերի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատուրումն ընդունած կողմի գրավոր հավաստման մեջ նշված գումարները միմյանց չեն համապատասխանում:

10. Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին հայտնել է, որ վերը նշված անհամապատասխանությունը Ընկերության կողմից չի շտկվել, քանի որ ըստ էության որևէ անհամապատասխանություն գոյություն չի ունեցել՝ հանձնաժողովի կողմից հաշվի չի առնվել, որ որպես համարժեք ներկայացված պայմանագրով նախատեսված չի եղել դրա կատարում ողջ ծավալով, իսկ կատարման ծավալը հաստատող փաստաթղթերը Ընկերության կողմից ներկայացվել են: Ինչ վերաբերվում է պայմանագրի կատարման արձանագրությանը, ապա դրանում նշված է պայմանագրի արժեքը, այլ ոչ թե կատարված մասի արժեքը, ինչը չի կարող համարվել անհամապատասխանություն:

4.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Էկոմիքս» ՍՊԸ-ի 16.06.2017թ. բողոքը, «Էկոմիքս» ՍՊԸ-ի և «Երքաղլույս» ՓԲԸ-ի միջև 14.01.2014թ. կնքված թիվ ԵՔԼ-ԲԸ-ԱՊՁԲ-14/1 և 27.02.2015թ. կնքված թիվ ԵՔԼ- ՇՀԱՊՁԲ-15/4(1) պայմանագրերը՝ կից փաստաթղթերով՝ հայտնում է հետևյալը.

<< քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը սահմանում է, որ՝

1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

<< քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝*** պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան,

իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Նույն օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ***պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:*** Պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ

կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: ***Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.***

2)…….».

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ***որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի*** (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը ***կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.***

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարությունը էլ. նյութեր ձեռբերելու նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7»

ծածկագրով ընթացակարգը, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Էկոմիքս» ՍՊԸ-ն:

«Էկոմիքս» ՍՊԸ-ն հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «Երքաղլույս» ՓԲԸ-ի հետ կնքած «ԵՔԼ-ԲԸԱՊՁԲ-14/1» և «ԵՔԼ-ՇՀԱՊՁԲ-15/4(1)» պայմանագրերը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 16 507 121 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:***

«Էկոմիքս» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ (1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 33-րդ, 37-րդ և 80-րդ չափաբաժինների մասով), մասնավորապես՝ 33-րդ չափաբաժնի մասով ***ընդհանուր արժեքը կազմել է 525 000 ՀՀ դրամ, 37-րդ չափաբաժնի մասով՝ 256 000 և 80-րդ չափաբաժնի մասով՝ 1 190 000 ՀՀ դրամ:***

Պատվիրատուն 17.05.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից (ըստ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների ամփոփաթերթի՝ Ընկերությունը 1-ին տեղ է զբաղեցրել Ընթացակարգի 33-րդ, 37-րդ և 80-րդ չափաբաժինների մասով), ուստի անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում g.tovmasyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

«Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել են հետևյալը՝

«Էկոմիքս» ՍՊԸ-ի և «Երքաղլույս» ՓԲԸ-ի միջև 14.01.2014թ. կնքված թիվ ԵՔԼ-ԲԸԱՊՁԲ-14/1 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 5 859 180 (հինգ միլիոն ութ հարյուր հիսունինը հազար հարյուր ութսուն) ՀՀ դրամ:***

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Էկոմիքս» ՍՊԸ-ի միջև 14.01.2014թ. կնքված պայմանագրի կատարման 02.02.2015թ. արձանագրության համաձայն՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները համապատասխանել են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և ***վաճառողի կողմից մատակարարվել են հայտերի հիման վրա, ժամանակին և պատշաճ կերպով***:

«Էկոմիքս» ՍՊԸ-ի և «Երքաղլույս» ՓԲԸ-ի միջև 27.02.2015թ. կնքված թիվ ԵՔԼ-ՇՀԱՊՁԲ-15/4(1) պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 10 647 941 (տաս միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ:***

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «Էկոմիքս» ՍՊԸ-ի միջև 27.02.2015թ. կնքված պայմանագրի կատարման 01.02.2016թ. արձանագրության համաձայն՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները համապատասխանել են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և ***վաճառողի կողմից մատակարարվել են հայտերի հիման վրա, ժամանակին և պատշաճ կերպով***:

Պատվիրատուն 30.05.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերին վերաբերող հաշիվ-ապրանքագրերի, ընդունման-հանձնման արձանագրությունները թերի են և պայմանագրին ու միմյանց չեն համապատասխանում, ուստի հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 7.3 կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները և ուղարկել g.tovmasyan@mil.am էլեկտրոնային փոստին: Հրավերի 7.4 կետի համաձայն՝ մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

3) շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար

4) չշտկելու դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.05.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մերժել է «Էկոմիքս» ՍՊԸ-ի հայտը, այն պատճառաբանությամբ, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշը հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի); դրա հաշիվ-ապրանքագրերի պատճեններում նշված գումարների հանրագումարը և այդ պայմանագրերի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման մեջ նշված գումարները միմյանց չեն համապատասխանում:

Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին հայտնել է, որ վերը նշված անհամապատասխանությունը Ընկերության կողմից չի շտկվել, քանի որ ըստ էության որևէ անհամապատասխանություն գոյություն չի ունեցել՝ հանձնաժողովի կողմից հաշվի չի առնվել, որ որպես համարժեք ներկայացված պայմանագրով նախատեսված չի եղել դրա կատարում ողջ ծավալով, իսկ կատարման ծավալը հաստատող փաստաթղթերը Ընկերության կողմից ներկայացվել են: Ինչ վերաբերվում է պայմանագրի կատարման արձանագրությանը, ապա դրանում նշված է պայմանագրի արժեքը, այլ ոչ թե կատարված մասի արժեքը, ինչը չի կարող համարվել անհամապատասխանություն:

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ գումարային արտահայտությամբ, Ընկերության կողմից ներկայացված Պայմանագրերը համապատասխանում են Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջին, որի համաձայն՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:***

Միևնույն ժամանակ Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված

որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ***իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի*** (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը ***կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը***.

Խորհուրդն արձանագրում է, որ «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել Ընկերության նախկինում կատարած պայմանագրերի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև «Երքաղլոյս» ՓԲԸ-ի և «Էկոմիքս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի կատարման 02.02.2015թ. և 01.02.2016թ. արձանագրությունները, որոնց համաձայն՝ Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները համապատասխանել են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և ***<u>վաճառողի կողմից մատակարարվել են հայտերի հիման վրա, ժամանակին և պատշաճ կերպով</u>***:

Իսկ ինչ վերաբերվում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարած պայմանագրերը և դրա հաշիվ-ապրանքագրերը գումարային արտահայտությամբ տարբերվում են, ապա այս մասով Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից նախկինում կատարված պայմանագրերը պատշաճ կերպով կատարվել են այնքանով, որքանով որ հայտերի հիման վրա պահանջվել է «Երքաղլոյս» ՓԲԸ-ի (պայմանագրերի կատարումն ընդունած կողմի) կողմից:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ հաշիվ-ապրանքագրերը գումարային արտահայտությամբ ևս բավարարում են Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջին:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից պահպանվել է Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Էկոմիքս» ՍՊԸ-ի 16.06.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ